

**Տ. ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՈՒՓՄԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(20 մարտի 2005 թ.)

«Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ,
յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռը Քեզ»:
(Ժամագիրը)

Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ, որ արարչական նախախնամությամբ դակա-
լին անհասպատ քայլեր ուղղորդեցիր անձնուակերպ փրկարանի ու սրբարանի՝ մեջավո-
րուս մկրտությամբ վերսպին ծննդով և Քեզ որդեզրելով: Այլ որպես «ընդրյալ անոռ»՝ նվի-
ռագործեցիր ու քահանայության կոչեցիր՝ Ս. Ավագանից մարդկային հոգիներին Քեզ որ-
դեզիրներ ծնելու: Աղաչանք է՝ անճառելի փառքի ճառագայթմամբ հոգուս խորանում ան-
սասանելի հավա՛քը հասպափիր:

Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ, որ արարչական սիրով անարժանիս Մարմնիո-
ւ Արյան կենարար հաղորդությանն արժանացրիր: Այլ որպես խորհուրդներիդ վնասիս՝
մարդկային հոգիներին նոյն սրբարար Հաղորդության մատսակարարմանը կարգեցիր: Աղա-
չանք է՝ Ամենասրբության ակնադրյութից մարմնիս դաճարում սրբարար ցո՛ղ կաթեցրու
և Ս. Սեղանի ու Անապակ Բաժակի ամբողջական սրբությամբ մերձնեցրու:

Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ, որ անհասելի բարձրությունիցդ անարգիս նայե-
լով, սուրբ առաջալների համազոր, կանչեցիր՝ Քեզ հետևելու և մարդկային հոգիների որ-
սորդ լինելու, Հայոց միաձնաէց Սրբավայրում սպասեցրիր՝ Ս. Հոգու գորությունն առնելու
և աշխարհասփյուս հայ հոգիներին Քեզ վկայելու: Աղաչանք է՝ առափարուխ շնորհներիդ
հեղմամբ՝ փրկարիս օճանման խորագիրությունն և աղավնակերպ միամբությունն պարզեցիր՝
որպես հայելի՝ աշխարհին ասպաւածային լուսու և մաքրամաքուր պավկերդ ցոլացնելու:

Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ, որ անմոռաց զիրության շնորհով անարժան
ճառայիդ «ղեկ» կարգեցիր ի մեջ Տանդ Հայոց՝ կամքիդ պատգամախոսը լինելու՝ Քո
անունով, ամենափես նայվածքիդ ներքո, Քեզ հաշիկ փալու պարփակորության զգացու-
մով: Աղաչանք է՝ ամենազիրությանդ հորդահոս եղջյուրից իմաստության աղբյուր ցայ-
լեցրու մորքիս ծալքերում՝ որպես բարի ավելարանիչ՝ ավելարանելու ամոթ չխամարելու
և որպես բարի սերմնացան՝ կենաց խոսք ժողովրդիդ հոգևոր ու միքավոր անդասպանում
սերմանելու:

Փա՛ռը Քեզ, Ասլուս՛ծ, փա՛ռը Քեզ, որ անբավ մարդասիրության շնորհով անպի-
դան ճառայիդ հովիկ կարգեցիր ի մեջ բանավոր հոդիդ Հայոց՝ դալար վայրերում և հան-
գուսպավես ջրերի մով սնուցելու: Այժմ էլ, Տէ՛ր, խղճմանը շարունակ հնչեցնում է հար-
ցումիդ արձագանքը, թէ՝ «Սիրո՞ւ ես ինձ»: Պարասխանս աղաչանք է՝ անչափելի սիրու
օվկիանից սրբիս փառավարում սիրո փրակ բխեցրու՝ հոդիդ ինձ վսփահված անդասպանում

րին շերմնուանդությամբ խնամելու, ուղղափառությամբ սնուցելու և կյանքի հոգեծովի մրրիկ ների միջով անվտանգ դեպի փրկության տրավան առաջնորդելու:

Ողորմա՞ծ և բարերա՞ր Ասրված, որ հայրական սիրովի անառակ որդուս Այլակերպության լառ ու լուսնեն հարկդ առաջնորդեցիր և իին մարդ՝ անիրավ կյանքով, խաչելով, նորոգված կյանքով նոր մարդուս արդարության հորիզոն ուղենչեցիր, ո՞րն է արժանիքս կամ առավելությունս, ինչ է կարողություն կամ ուժականությունս, որ հավիտենական նախայընամությամբ տնտեսության մեջ Քեզ գործակից՝ ճշմարդությանդ քարոզիչ և խորհուրդներիդ մարդակարար կարգեցիր: «Պաղաքազին աղաչանքս է՝ կարարյալ հավաք, ենիս ու սեր շնորհիր որդուտ՝ որպես «մշակ առանց ամօթոյ»՝ բարի պարերազմս պարերազմնու, ընթացք ավարտելու և հավակս պահելու:

«Փա՛ռք Քեզ, Ասրվա՛ծ, փա՛ռք Քեզ,
յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռք Քեզ»:

Սիրելի՝ հավագրացյալներ,

Քառասուն օրեր առաջ՝ Ս. Վարդանանց փոնին, Մայր Տաճարի Խջման Ս. Սեղանի առջև երկու եղբայրներիս հետ ուխտ կնքեցի՝ քահանայության ասրիճանին կոչվելով, ինչ կապակցությամբ մեր որդիական անկեղծ խոնարհությունն ու ջերմագին նվիրումն ենք հայրնուն Ն. U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ հայրական ու հայրապետական տնօրինությամբ ու օրինությամբ մեզ արդունք ձեռնադրության ու օծման շնորհին արժանանալու՝ համարելու հայոց առաքելաշավակի ու լուսավորչահասքադ նվիրապետության շարքերը: Նվիրական այս սրբավայրից աղոթում ենք Հայոց Հայրապետի կենաց արևշարության համար և բարեմաղթում, որ Տերը գորավոր պահի Հայոց Հովկապետի ծաղկյալ գավազանը:

Մեր որդիական սրբարուխ երախտագիտությունը՝ Շիրակի թեմի Քարեխմամ առաջնորդ Տ. Ս. Սիրայել Եայսկոպոս Աշապահյանին, որ հոգևոր ծնողի պարտականություն սպանձնեց իր ձեռնադրմամբ ու օծմամբ ասրվածային երկնառաք շնորհները մեզ փոխանցելով: Մեր աղոթքն է, որ Տերը Սրբազն Նորն անսասան պահի՝ իրեն Վստահված հովու անվրտանգ առաջնորդելու, և ասրվածային շնորհները բազմացնի՝ նորանոր ձեռնադրություններով ծավալելու:

Մեր երախտագիտության ջերմ զգացումները Ս. Դոփիսիմն վանքի վանահորը, հոգևորականությանն ու երջախմբին՝ սրբարաց ու ողեշնչող ընդունելության համար: Սուրբ Դոփիսիմն կույսի բարեխոսությամբ՝ Ասրված մեզ ամենքի թող օրինի, շնորհազարդի՝ ի խնդիր արդյունավոր ծառայության ու վանքի պայծառության:

Վերջապես, մեր սրբազին շնորհակարությունները բոլոր նրանց, ովքեր ինչ-որ չափով իրենց լուման ունեցան մեր՝ որպես մարդ և որպես հոգևորական ձևավորման, կերպման ու պարտասպաման պարախանակու գործում:

Աղոթեցե՛ք նորաօծ երեք հոգևորականներիս համար, որ Բարերար Ասրված օրինի և առարքարուխ շնորհները բազմապատկի մեր հոգիներում՝ աներեր հավաք, անծախելի սեր

և ա անմնացորդ Ավիրվածություն դրսնորելու Ասպծուն և մեր ժողովրդին ծառայելու առաքելության մեջ:

Եվ ահավասիկ, կամոքն Ասքծու մեր անդրանիկ Պատրարազի մաքրությունը համընկել է Ավելեցական ամենանվիրական գոտներից մեջին՝ Ծաղկագարդին:

*«Օվսաննա՝, օրինյա՛լ լինես Դու, որ զայիս ես
Տիրոց անունով, ո՛վ բազավոր Խորայիլ»:*

(Հովհ. ԺԲ 13)

Սիրելի՛ հավափայցալներ, այս բնաբանը վերցված է Հովհաննու Ավելարանի այն դրվագից, որտեղ նկարագրվում է Վիսու Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելը: Ավելարանի այս վկայությունը խորհրդանշական մի փեսարան է ներկայացնում մեր աչքերի առջև. մի կողմից՝ Վիսու Երուսաղեմ է մտնում էջով, Որի համար անզամ թամբ են ծառայում առաջալների զգեստները. մյուս կողմից՝ Նրա մուգը ցնծությամբ դիմավորում և ողջունում է ժողովրդական բազմությունը՝ զգեստներ փոխելով և ծառի ճյուղեր ու ոսպեր նեփելով Նրա ճանապարհին և օվաննաներ ու օրինության խոսքեր արդասանելով: Զգեստներ էին փոռում՝ ի նշան իրենց սրբերի խոնարհության, ծառի ճյուղեր ու ոսպեր էին նեփում՝ ի նշան հաղթանակի, և օվաննաներ էին երգում՝ ի նշան փառարանության Նրան, Ով զայիս էր Տիրոց անունով:

Առհասարակ, իին աշխարհում որևէ երկրային թագավորի ժամանման կապակցությամբ մեծագույն իրադարձություն էր փեղի ունենում՝ առաջընթաց մունեփիկներ, շեփորի ազդարարություն, պերճաշոր կառքեր, գինավառ հեծյալներ: Նմանօրինակ հանդիսավորություն չկար այսպես, քանի որ, ինչպիս Տեր Ինքն է հայրնում, Իր թագավորությունն այս աշխարհից չէ: Նա, որպես Թագավոր և Փրկիչ, Իր հաղթական մուգըն իրագործում է ամենախոնարհ կենդանու՝ էշի միջոցով՝ հսկայուն շեշտադրելով Իր թագավորության զանազանությունը՝ աշխարհի թագավորությունների համեմագրությամբ:

Վիսու Երուսաղեմ այս մուգքով փաստում է, որ Ինքը եկել է ոչ թե երկրային, այլ հոգևոր իշխանությամբ, ոչ թե թագուկների ուժով, այլ սիրո զորությամբ, ոչ թե զայրույթով՝ վրեժիշընդիր լինելու, այլ զօրությամբ՝ փրկելու: Ի հասպարումն այս ամենի՝ եկել է էշին նսպած, ոչ թե նյութական ճոխությամբ, այլ հոգևոր խոնարհությամբ, ոչ թե պատերազմ, այլ խաղաղություն հասպարելու, ոչ թե սիրաշավ ձիով, որի ահեց ոչ ոք նրան մոցենալ չէր համարձակվի, ոչ թե սրընթաց մժույգով, որի եփնից ոչ ոք չէր կարող հասնել, այլ մի էշով, որ ամեն մարդ ի վիճակի լիներ իրեն մոցենալու: Նա եկել էր ոչ թե օպարի փիրակալությունը թորափելու, այլ մեղքի ու մահվան փիրակալությունը վերացնելու, ոչ թե երկրային արտօնի իշխանությունը, այլ սրբի, սիրո թագավորությունը հասպարելու, ոչ թե ծանր լուծ դնելու, այլ մարդկանց ծանրալույծ մեղքերն ու հանցանքներն Իր վրա վերցնելու, Իր օրենքները ոչ թե ենթակաների, այլ Իր իսկ արյամբ զրելու:

Ֆիրավի, այսպիսին է Տիրոց թագավորության եռթյունը, բովանդակությունն ու բնույթը:

Այսօր է եկեղեցու այս Ս. Խորանից Քրիստոս մեզ՝ 21-րդ դարում ապրողներիս հետ խոսում է Ավելարանի նոյն դրվագով, նոյն պարզամով և նոյն խորհրդով: Այսօր էլ

Քրիստոս գալիս է՝ մուտք գործելու նոր Երուսաղեմ, որ մեր Եկեղեցին է ընդհանրապես, և մեր հոգիները՝ մասնավորապես: Ինչպես ենք ընդունում մեր Փրկչին՝ օվաննաներով՝ թէ՝ անփառքերությամբ, ծատի ճյուղերով՝, թէ՝ ընդիմությամբ, զիրակցաբար՝, թէ՝ անզիփությամբ: Եթե ուշադրությամբ հայացք ներենք մեր արքաքին աշխարհից և մեր ներաշնարհից ներս, ապա միանալու մեջ համար կորվագծվի նոյն պարկերը, ինչ որ էր Քրիստոսի՝ Երուսաղեմ մընելու ժամանակ:

Մեր հասարակության մի մասը, ովքեր հերթամուր են արդարության ճշմարտության ու սիրո, ծատի ճյուղերը ձեռքներին անկեղծորեն դիմավորում ու ողջունում են Տիրոջ զալուսպը, մերցի ու մասկան իշխանության նկարմամբ Նրա հալթանակը և երկրի վրա սիրո թագավորության հասպաքումը՝ Տերունական աղոթքի հետևողությամբ ասելով. «Հռ արքայությունը թող զա. Զո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Մի զայի մասն է փաստացի մերժում է և՛ Տիրոջը, և՛ իր կյանքից ներս Նրա մուտքը ու թագավորության հասպաքումը, որպիտեպն «ով չարիք է գործում, ապրում է լոյսը և չի գալիս դեպի լոյսը, որպես նրա գործերը իր երեսով չբան»:

Այսպիսի կյանքը նախընքրած մարդն իր ձեռքբերումների ու նվաճումների ուղին գեսնում է աշխարհիկ իշխանության, ֆիզիկական գորության, մարդկային փառքի, նյութեան հարստության և իր եսի տիրակալության մեջ: Այնինչ Տիրոջ թագավորությունը եսի, անձնականության տիրակալություն չէ, ընդհակառակը՝ սիրո գերիշխանություն, որպես թագավորը Գերազույն Սերն է՝ Ասպած և օրենքը՝ անսպաս սիրո դրսնորում՝ Նրա կամքը, որպես արարածներն, ըստ Արքայի կամքի, ապրում են միմյանց սիրելով ու հավատալով, ճշշմարտությամբ ու արդարությամբ, խոնարհությամբ ու առաքինությամբ:

Կասկածից վեր է, որ Ասպծո իշխանությունը համապարած է Իր արարչության մեջ, չկա մի փեղ, որ Ասպած ներկա չլինի, մենք է, որ Նրան բացակա ենք դարձնում մեր կյանքում: Եվ Ասպծո Որդին՝ Քրիստոս, մեր ազաք կամքի համաձայն, մեր իսկ երշանկության ու խաղաղության համար հրավիրում է Իր ասպածային ներկայությունը մեր սրբերի մեջ ընդունել: Սա պատճեն շուրջերով մեզ է կոչ անում. «Վեր բաշեցեր, իշխաններ, դռները ձեր, թող բացեն հավիքենական դռները, և փառքի Արքան թող ներս մդնի», այսինքն՝ բացեր ձեր սրբերի դրները՝ ընդունելու փառքի Տիրոջն ու Իր արքայությունը:

Միրելի՛ հավաքացյաներ, Ծաղկազարդի սքանչելի այս լուսակաբարությամբ Ասպծո Որդին մեզ պարզամում է՝ ի ցոյց մեր սրբերի խոնարհության՝ հանել և Իր ուժքերի փակ փոել մեր մեղքերով ծանրացած զգեստները՝ «ազակությունը, թշնամությունը, արելությունը, նախանձը, բամբասանքը, բարկությունը, հակառակությունը, շվայրությունը, հարթեցողությունը, կախարդությունը, գուշակությունը»: Պարզամում է՝ օրինված ճյուղեր առնել ու լուսն լուսնել՝ ի նշան Քրիստոսի միջոցով մեղքի դեմ դարած հաղթանակի՝ մեր հոգևոր գարթոնքի, սիրո, հավատի, հոյսի, ուրախության, միայն թէ զգուշությամբ, որ չլինի մեր չարագործություններով այդ ճյուղերը փշե պասկի վերածվեն՝ մեզ հասակից անելով Տիրոջը չարչարողներին ու ծաղրողներին, պարզամում է՝ սաղմոսներ, աղոթքներ ասել ու շարականներ երգել՝ ի փառ Ասպծո և Նրա արքայության գալստյան: Դայր Ասպծո սերը, Որդու շնորհը և Ս. Նոգու սրբար զորությունը մեր ու մեր հարկերից ներս թող լինի. ամեն: